

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱԼ

ԱՆԻՄՅԱԼ ՏԱՐԻՆԵՐ

1914-1919

Անձնական յիշարկներ

(հարված)

Տասը օրի չափ մնացին Օսմանի: Յետոյ կառքով ճամբայ ելանք դէպի Իսլահիէ որ երկու օրուան հետատրուքիւն ունի:

Այս ճամբուն վրայ տեսանք տարագիրներու կարասաններուն անկարագրելի խեղճութիւնը: Հազարատոյ կիներ, աղջիկներ, տղաք, իրենց բեռներուն տակ կքած ոգեսպառ ու ցաւատանջ կը քայեն ու կը քայեն ելնէջատր քարոտ ու ցեխոտ ճամբաներէ, ողբ ու կոծի աղաղակներ բարձրացնելով: Դիակներ հոս ու հոն, զիշատիչ թռչուններէ, շումերէ ու բորենիներէ յօշոտուած: Հիւանդներ, որոնք ծառերու տակ կը հեծեծեն անօգնական: Նորածիններ լքուած, որոնք կը ճուսն անօթի: Ափ լափոյ, գէշ թաղուած մեռելներ որոնց սրունքը կամ թեւը դուրս մնացած է... դժոխային ահռելի տեսարան գոր ո՛չ մէկ Տամդէ կրցած է երևակայել:

Մանուկներ, կորսուած կամ լքուած, որոնք «մայրի՛կ, մայրի՛կ» կը պոռան լալահառաչ և որոնց ո՛չ ոք պատասխան կուտայ:

Ու այդ անհմարին աղէտքը, այդ ահռելի արհաւիրքը կը տեսնէինք առանց օգնութիւն մը կարենալ ընելու, առանց մխիթարութիւն մը կարենալ տալու:

Իրիկունը հասանք Հասան Պէլլի, ուր պիտի զիշերէինք: Հոն ալ քանի մը հարիւր գաղթականի վրաններ կային:

Գարեգին վարդապետ ծանօթներ ալ գտաւ, որոնք եկան խանը, ուր իջևանած էինք ու տեղեկութիւն տուին իրենց վիճակին վրայ:

Հետևեալ առտու երբ կը պատրաստուէինք մեկնիլ, եկաւ զիս գտաւ Հայկ Կօշկարեանը, գրավաճառ և «Կիկօ»¹-ի հրատարակիչ:

Ինք պատերազմին սկիզբը, իբրև զինուոր ղրկուած էր Չաթալճայի կողմերը, ուրկէ խոյս տալով՝ ապաստանած էր Ռոտոսթո, ուր ծածկուած կը մնար:

- Հոս ի՞նչ բան ունիս, - հարցունցի:

- Ռոտոսթոցիներուն հետ ես ալ մուհաճիր² եղայ, - պատասխանեց:

Եւ պատմեց թէ բաւական ճշգրտութիւն կրելէ ետքը հասած էին Հասան Պէլլի, ուր կը մնային առայժմ, ոստիկանները կաշառելով:

Նոյեմբերի վերջերն էր և ցուրտը սկսած էր այդ կողմերը: Բաց կառքերուն մէջ դողդողալով ճամբանիս շարունակեցիք, հետզհետէ դէպի վեր ելլելով: Հանդիպեցանք բաճուոր հալ զինուորներու, որոնք ճամբու շինութեան կ'աշխատէին ամենախեղճ վիճակի

¹ «Կիկօ» - երգիծաթերթ, լույս է տեսել Կ. Պոլսում 1909-1911 թվականներին, խմբագիր՝ Գրիգոր Թորոսյան:

² Մուհաճիր - գաղթական:

մէջ: Իրենց մէջ կը գտնուէին «Ժամանակ»³-ի երկու մասնակի մարտնչներ, որոնք զիս ճանչնալով եկան կառքին քով:

- Օրը տաք ժամ, այս ցուրտին, կ'աշխատինք չոր հացի մը փոխարէն,- ըսին:
- Բայց այստեղ տուն չկայ, վրան չկայ,- դիտել տուի,- զիշերը ո՞ր կը պատկիք:
- Հոս, բացօթեայ կը պատկինք,- պատասխանեցին:
- Հիւանդ չե՞ք ըլլար...
- Հարկաւ կ'ըլլանք:

Ու բացատրեցին թէ ութը հարիւր հոգիէն հազիւ 160 հոգի ողջ մնացած էին իրենց մէջէն:

Միմէն իսկապէս հանդիպեցանք հազարատր տարագիրներու միշտ մոյմ ահեղիօրէն խղճալի վիճակին մէջ:

Ու առեմ հասանք իսկապէս ու իջանք պանդոկ մը որուն տէրը յոյն էր ու հաճեցաւ մեզի հիւրընկալել:

Իսկապէս մոյմ միջոցին 10 հազարի մօտ տարագիրներ կային վրաններու տակ: Քաղքին օդը վատառողջ ու տենդային է: Գրեթէ ամէն վրանի մէջ մէկ մէկ հիւանդ կար:

Հոն կրկին հանդիպեցայ Հրամոտ Մկրեանին որ մորէն պահապանի ու մեռելաբաղի պաշտօն կը կատարէր:

- Օրական 100-150 հոգի կը մեռնի կոր,- ըսաւ,- ո՛չ բժիշկ ունինք, ո՛չ դեղ:
- Բայց լսեցի որ ինչ հիւանդանոց մը կայ եղեր:
- Այո՛, գիտութեամբ հիւանդանոց մը, մեզի օգուտ չունի... մոյմ իսկ բժիշկը օր մը չեկաւ հիւանդները աչքէ անցնելու:

Իսկապէս մէջ հանդիպեցայ Մովսէս Էֆէնտի Պալըքճեանի որ փայտի միջոցաւ եղած էր ու այսպէս յաջողած էր իր պարագաներով ու ընտանեօք հոն հաստատուիլ:

Օր մըն ալ մեր սեմեակէն մերս մտաւ Հրամոտ Մամուլէր զոր Գոմիայի մէջ տեսած էի:

Դարձեալ իր յիմնապետի համազգեստը կը կրէր:

- Միշտ պաշտօնի վրա՞յ ես,- հարցուցի:
- Չէ,- պատասխանեց,- աստիճան առին վրայէս, հիմա պարզ զինուոր եմ և ամէլէ թապուրի⁴ ին կը պատկանիմ:

- Բայց համազգեստդ...

- Սուրս առին, սակայն համազգեստս թողուցին:

- Ո՞ր կ'երթաս այսպէս:

- Տակաւին որոշ չեմ զիտեր, բայց կարծեմ միմէն Պիրսապա պիտի դրկեն, առայժմ Հալէպ կ'երթանք կոր:

- Քանի՞ հոգի էք:

- Ութսուն հոգի, մեծ մասը հայ և յոյն:

³ «Ժամանակ» - օրաթերթ, լույս է տեսել 1908-1920 թվականներին, ապա՝ 1924-ից: Հիմնադիր - խմբագիր՝ Քասիմ (Միսաք Գոշումյան):

⁴ Ամէլէ թապուրի - բանվորների խումբ, աշխատախումբ:

Հետևեալ օրը մեկնեցաւ շոգեկառքով: Այլ անկէ ետքը զինքը չտեսայ, բայց իմացայ որ իրացնէ միմչև Պիրսապա գացեր ու յետոյ յաջողեր է Երուսաղէմ դառնալ ու հոն մնալ իբրև հիւանդանոցի պաշտօնեայ:

Իսլահիէ գտնուող տարագիրներուն միակ բաղձանքը, սկեռուն նպատակն էր ինքզինքնին նախ Հալէպ ու անկէ Սուրիա մետել:

Գիտէիք որ Սուրիա գացողները բաղդաստաբար հանգիստ էին միմչեղո դէպի Տէր-Ջօր գացողներուն՝ անխուսափելի մահն էր որ կը սպասէր:

Գառնիկ Մազմանեանը որուն ճամբան հանդիպած էի երբ երկրագործական մեքենայ մը Ատանայէն Գոմիա կը փոխադրէր, ըսած էր ինծի:

- Նայէ՛ որ Հալէպ երթաւ, ամէն ջանք թափէ՛ ասոր համար:

- Բայց ասոր միջոցը ի՞նչ է:

- Իսլահիէն շոգեկառք մտիլ ու Հալէպ իջնել, չըլլայ որ Ռաճիօ կամ Քաթմա իջնես:

Խորհուրդը լաւ էր անշուշտ, բայց գործադրութիւնը, ափսո՛ս, դժուար:

Բացարձակապէս արգիլուած էր հայերուն տոմսակ տալ Հալէպի համար: Ծածկաբար երթալն ալ անհնարին էր որովհետև թէ՛ շոգեկառքին մէջ, զրեթէ ամէն կայարան ամենախիստ խուզարկութիւններ կը կատարուէին և թէ՛ Հալէպի կայարանը:

Նոյն իսկ շա՛տ դժուար էր շոգեկառքով Ռաճիօ կամ Քաթմա երթալ:

Հայ տարագիրները պարտաւոր էին ոտքով կամ կառքով ճամբորդել, քաղաքներու մէջ չքնակիլ: Պանդոկներուն արգիլուած էր հայ ընդունիլ:

Եթէ մենք յաջողած էինք Օսմանիէի մէջ քաղաքը բնակիլ ու Իսլահիէ պանդոկ մը իջնել, ապիկա երկու հեռագիրներու շնորհիւ էր զոր Գարեգին վարդապետ մասունքի մը պէս կը պահէր գրպանը:

Այդ երկու հեռագիրները պատերազմական նախարար Էմվեր փաշայի կողմէ ուղղուած էին իրեն հետևեալ պարագաներու տակ:

Էմվեր փաշա Կովկասեան ճակատը այցելելէ ետքը, վերադարձին Գոմիայէ կ'անցնի: Կայարանին մէջ ընդունելութիւն կ'ըլլայ իրեն: Սակայն Գարեգին վարդապետ լուր չունենար, այնպէս որ չկրնար մերկայ գտնուիլ: Այս բացակայութիւնը դարմանելու համար հեռագրով իր ցաւը կը յայտնէ կայարան գտնուած չըլլալուն և միևնոյն ատեն մէկ քանի փառաբանական բառեր կ'ուղղէ Էմվերի հասցեին: Առաջին հեռագիրը ասոր պատասխանն էր և շնորհակալութեան խօսքեր կը պարունակէր:

Երկրորդ անգամ, երբ Գոմիայի հայերը տարագիր կ'ըլլային իրենց առաջնորդին հետ, Գարեգին վարդապետ Էրէլլիէն հեռագիր մը կ'ուղղէ Էմվերին խնդրելով որ Գոմիայի նահանգը գտնուող հայերը տարագիր չըլլան: Էմվեր ասոր ալ կը պատասխանէ երկդիմի ո՛րով մը:

Այդ երկու հեռագիրներուն շնորհիւ էր որ քիչ մը աչք կը գոցէին մեզի ու թոյլ կուտային քաղաքին ու պանդոկին մէջ կենալու քանի մը օր:

Այդ միջոցին Էմվերի ստորագրութեամբ գրպանին մէջ երկու հեռագիր ունենալը բաւական մեծ բան կը նկատուէր:

Այսուհանդերձ օր մը ժամտարմա քօմանտան⁵ին եկաւ մեր սենեակը և.

- Դուք տակաւին հո՞ւ եք,- պողպատի սկսաւ նախատել Գարեգին վարդապետը և նոյն իսկ մօրուքէն քաշքշել:

Յետոյ, իրեն ընկերացող ոստիկանին հրամայեց որ ամէնքս ալ,- կիներէն զատ,- իսկոյն կառավարչատուն տան:

Մամբայ ելանք: Քօմանտանը միշտ նախատինք ու սպառնալիք տեղալով կուգար մեզի հետ: Պահ մը լսեցի որ ոստիկանին կ'ըսէր.

- Քեզի քանի ծեծէ՛ ըսեմ նե՛ ամիսնայ պիտի ծեծես, զիտցած ըլլաս...:

Մտմտուքը առաւ մեզի: Բարեբախտաբար տեղոյն գայմագամի փոխանորդը, որ նախապէս Թարսուս կը գտնուէր, ծանօթ էր Գարեգին վարդապետին: Միայն թէ պիտի կրնայի՞նք զինքը տեսնել:

Քօմաք⁶ հասնելուն՝ ոստիկանը հրամայեց որ բակը կենանք, մինչ քօմանտանը զնաց իր սենեակը:

Գարեգին վարդապետ յաջողեցաւ սակայն սանդուխէն վեր սպրդիլ ու մտնել գայմագամի փոխանորդին քով ու խնդիրը բացատրել իրեն:

Գայմագամը հրամայեց որ մեզ ազատ արձակեն: Ու այսպէսով օձիքնիս ազատեցինք: Մէկ երկու օր ետքը այդ մարդուն բարեացակամութեամբը յաջողեցանք Հալէպի համար տօմսակ ձեռք ձգել և շոգեկառք նստիլ, ինչ որ մեծ յաջողութիւն մըն էր մեզի համար:

*

Սէպիլ Հալէպի արևելեան կողմը ընդարձակ դաշտ մըն է, քաղքէն ոտքով մէկ ժամ հեռաւորութեամբ: Տէր-Ջօր երթալիք տարագիրները հոն կը դրկուէին, վրաններու ներքև:

Սէպիլ դժոխքի կայարանն էր հայերուն համար:

Արևը մարը մտնելու վրայ էր երբ հասայ Սէպիլ:

Հազարաւոր վրաններ ցցուած էին ամէն կողմ: Բաւական փնտռոտքներէ ետքը վերջապէս գտայ մերիմները, ծանօթի մը վրանին մէջ:

Թէև մենք ալ վրան մը ունէինք հետերմիս, բայց չէինք տնկած:

- Այս գիշեր այսպէս անցընենք մեր բարեկամին վրանին ներքև,- ըսաւ Գառնիկ Պօտորեան,- վաղը մեր վրանը կը տնկենք յարմար տեղ մը:

Ընդհանրապէս պարտիզակցիներ, ատաբազարցիներ, ռոտոպոցիներ ու Էտիրնէցիներ էին այդ միջոցին Սէպիլ գտնուողները: Կային նաև փոքր թիով աֆիօնգարաճիաարցիներ, խարբերոցիներ ու տիգրանակերտոցիներ:

Այն վրանը ուր մեզ հիւրընկալեցին՝ պարտիզակցի ընտանիքի մը կը պատկանէր:

- Մենք Սուրիա պիտի երթանք,- ըսաւ ընտանիքի պետը,- ինչպէս նաև մեզի հետ 300-ի չափ ընտանիքներ:

- Բայց ինչպէ՞ս յաջողեցաք...

⁵ Ժամտարմա քօմանտան – ոստիկանապետ:

⁶ Քօմաք – ալտեղ՝ ոստիկանատուն:

- ԸՒՄԱՅ փաշա հրաման ըրած է որ արհեստաւորները զատուին ու Ծամ դրկուին, մենք ալ իբրև արհեստաւոր հոն պիտի երթանք ու կառավարական գործարաններու մէջ պիտի աշխատինք: Մասնատրապէս կը փնտռեն կոր դերձակները, կօշկակարները, երկաթագործները, ատաղձագործները, ոստայնանկները:

- Այդ երեք հարիր ընտանիքներն ալ արհեստաւոր՞ր են:

- Մեծամասնութիւնը արհեստաւոր է, բայց կայ մէջերմին մաս մը որ ու է արհեստ չուր, բայց յաջողած է իբրև արհեստաւոր արձանագրուիլ:

- Ի՞նչպէս...:

- Կաշառքով կամ խաբեքայութեամբ:

Արդարև շատ էրիկմարդիկ որոնք իբրև դերձակ արձանագրուած էին, առտուրնէ մինչև իրիկուն իրենց վրաններուն մէջէն մտած, իրենց կիներէն թելը ասելին անցնել, կար կաշի կը սորվէին:

Պարտիզակցին խոստացաւ աշխատիլ մեզի ալ արհեստաւորի մէջ մէկ վէսիքա⁷ ձեռք ձգելու համար:

Իրա՛ւ ալ հետևեալ օրը կրցաւ ձեռք ձգել մեռած մարդերու երկու վէսիքա որոնք զնած էր մէջ մէկ ոսկիի: Այս վէսիքաներէն մին Գառնիկ Պօտուրեանը առաւ, իսկ միւսը Միհրանը:

Ես բացը մնացի:

- Հոգ մի՛ ըներ, քեզի ալ ճար մը կը գտնանք,- յուսադեց պարտիզակցին:

Եւ իրիկունն դէմ կէս ոսկիի փոխարէն, ձեռք ձգեց մոյն օրը վրաններուն մէջ մեռած պարտիզակցիի մը մուֆոս թէքէրէսի⁸ որուն մէջ հանգուցեալին արհեստը մշակուած էր: Մեռնողը տիրկէր⁹ է եղեր, ես ալ ստիպուեցայ իր անունն ու արհեստը ընդունիլ և եղայ պարտիզակցի տիրկէր Ասատուր, 52 տարեկան, ամուսնացած և երկու զաւակներու հայր:

Ասիկա թէև վէսիքա չէր, բայց վերջապէս արհեստաւոր ըլլալս հաստատող պաշտօնական թուղթ մըն էր:



Տիգանդըրին սարսափելի ջարդ կ'ըներ Սէպիլի վրաններուն մէջ: Դեկտեմբերը հասած էր, անձրևը կը տեղար: Տուրտը անտանելի էր մանաւանդ գիշերները: Բարակ կտաւ շինուած պատառատուն, խարխիլ վրանները անբաւական էին օդին դժնդակութեան դէմ պաշտպանելու համար մէջը գտնուողները: Աւելցուցէք ասոնց վրայ սնունդի անբաւականութիւնը և կրնաք երևակայել թէ որքա՛ն հիւանդներ պատկած էին վրաններուն տակ:

Առտուրնէ մինչև իրիկուն աղբի կառք մը, որ իբրև մեռելակառք կը ծառայէր, կ'երթար կուգար մեռեալ փոխադրելով: Ամէն անգամ ութը տասը հատ կը դիգէին կառքին մէջ ու այնպէս կը տանէին [...]

⁷ Վէսիքա - փաստաթուղթ:

⁸ Նուֆոս թէքէրէսի - անձնագիր:

⁹ Տիրկէր - հյուան:

Առաջին անգամ Սեպիլի վրահանքում մեջ տեսայ տղայ վաճառելու զարհուրելի ու սրտաճմիկ գործողությունը:

Հալեպէն կուզային՝ կառքերով՝ արաք, թուրք, հրեայ կիներ ու կ'սկսէին շրջիլ մէկ վրահէն միւսը:

- Սաթըրք չօճուք վա՞ր մը¹⁰, - հարցնելով:

Այն ծանոթները որոնք ունկոյտ էին՝ սոսկումով ճամբու կը դնէին այդ կիները, իսկ խեղճերը, անօթիները կը վարահէին:

Այդ վարահումը բաւ էր սակարկութեան սկսելու համար:

- Տանք երթայ, - կ'ըսէր էրիկը իր տղուն ձեռքէն բռնած:

- Կը մեռնիմ՝ զաւկէս չեմ բաժնուիր, - կը գոչէր կինը լալով:

Եւ ահա զնորդ կիները կը միջամտէին:

- Դուք արդէն մեռնելու կ'երթաք կոր, գոճէ սա տղան ազատեցէք: Մենք թարիք ընելու համար է որ առնել կ'ուզենք: Մեզի զաւակ պիտի ընենք... եթէ ողջ մնաք ու ետ դառնաք մորէն ձեր զաւակը ձեզի կուտանք:

Ու այսպէս հազար ու մէկ համոզիչ խօսքեր: Ու մայրը որ իր զակին անօթի ըլլալը գիտէ և միջոց ալ չունի կերակրելու, վերջապէս յուսահատ տեղի կուտայ:

Կիները մէկ երկու մեծիտ կը դնեն մարդուն ձեռքը և մանուկը կառք դնելով կը մեկնին:

Ու ահա՝ ողբ ու կոծը կը սկսի: Հիմա հայր ու մայր երկուքն ալ կուլան, կը գղջան իրենց ըրածին վրայ, կառքին ետևէն վազել կ'ուզեն, բայց ան արդէն հեռացած է...:

Տեսայ կին մը որ իր երկու զաւակները վաճառելէ քանի մը ժամ ետքը խեղդեցաւ:

Ուրիշներ, տեսակ մը թմրութեան, ապուշութեան մէջ կ'իյնային, լուռ, ակնարկը սևեռում, ժամերով գետիմը մտած կը մնային: Ա՛յ կարծես զգացումը, զիտակցութիւնը մեռած էր իրենց մէջ, անասնացած էին...

Սեպիլի մէջ, այսպէս, հազարաւոր հայ տղաք ու աղջիկներ ծախսուած են հալէպցի աւրաբներու, թուրքերու և հրեաներու: Ընդհանրապէս փոքր տղաքը յարգի էին, 7-10 տարեկան, մանաւանդ աղջիկները:

Մանուկներու վաճառումը տեղահանութեան ահելի եղեռնին ամենէն զաւանդեցնող դրուագներէն մէկն է: Երբեք կարելի չէ մարդկութեան անելի մեծ ճաշատագնա մը երևակայել:

Հրապարակումը պարբերական

ԳՐԻԳՈՐ ՆԱԿՈՐԱՅԱՆԸ

¹⁰ Սաթըրք չօճուք վա՞ր մը - ծախու մանուկ կա՞: